«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան
32/6(+374 10) 51 00 00

Moneytun արագ դրամական փոխանցումների տեղեկատվական ամփոփագիր

Ուժի մեջ է 17.02.2025թ. ժամը 09:00-ից

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ MONEYTUN ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ

ԱՐԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	ՀՀ - ԱՄՆ /ուղարկում և ստացում/ ՌԴ - ՀՀ /ստացում/
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԱՄՆ-ի Կալիֆորնիայի և Նևադայի նահանգներ ՌԴ տարածքում
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ	Դեպի ԱՄՆ՝ ԱՄՆ դոլար
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ	ԱՄՆ-ից՝ ԱՄՆ դոլար կամ ՀՀ դրամ ՌԴ-ից՝ ՌԴ ռուբլի կամ ՀՀ դրամ
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿ	Կանխիկ կամ անկանխիկ՝ շահառուի բանկային կամ քարտային հաշվին
ՄԵԿ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՒՄԱՐ	10 – 10,000 ԱՄՆ դոլար 100 - 300,000 ՌԴ ռուբլի
ԱՄՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐ	10,000 ԱՄՆ դոլար 300,000 ՌԴ ռուբլի
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱԿԱԳԻՆ	Փոխանցվող գումարի 2%, նվազագույնը 2 ԱՄՆ դոլար
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱԿԱԳԻՆ	Չի կիրառվում

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԵՎ ՔԱՐՏԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ	
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	• ՀՀ-ից դեպի ԱՄՆ 6 նահանգներ (Նևադա, Կալիֆորնիա, Ֆլորիդա, Տեխաս, Վաշինգտոն, Նյու Ջերսի) • ՀՀ-ից դեպի Եվրոպա[1] • ՀՀ-ից դեպի Չինաստան • ՀՀ-ից դեպի Հնդկաստան • ՀՀ-ից դեպի ՌԴ
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ	Դեպի ՌԴ՝ ՌԴ ռուբլի Այլ երկրներ՝ ԱՄՆ դոլար
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ	ԱՄՆ-ում՝ ԱՄՆ դոլար Եվրոպա՝ Եվրո Չինաստանում՝ Չինական յուան Հնդկաստանում՝ Հնդկական ռուփի ՌԴ-ում՝ ՌԴ ռուբլի
ՄԵԿ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՒՄԱՐ	ԱՄՆ, Եվրոպա, Հնդկաստան՝ 10 – 10,000 ԱՄՆ դոլար Չինաստան՝ 10 – 3,000 ԱՄՆ դոլար ՌԴ՝ 100 – 400,000 ՌԴ ռուբլի
ԱՄՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՈՒՄԱՐ	10,000 ԱՄՆ դոլար 400,000 ՌԴ ռուբլի
ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱԿԱԳԻՆ	ԱՄՆ՝ 7,000 ՀՀ դրամ SEPA երկրներ՝ 7,000 ՀՀ դրամ Չինաստան՝ Փոխանցվող գումարի 2%, նվազագույնը 5 ԱՄՆ դոլար Հնդկաստան՝ Փոխանցվող գումարի 2%, նվազագույնը 2 ԱՄՆ դոլար ՌԴ՝ Փոխանցվող գումարի 1%, նվազագույնը 100 ՌԴ ռուբլի

! Ծանոթություն

Սակագինը գանձվում է ՀՀ դրամով, սակագնի կիրառման ժամանակ հիմք է ընդունվում տվյալ պահին Բանկում գործող անկանխիկ վաճառքի փոխարժեքը:

[1] SEPA անդամ երկրները ներկայացված են Եվրոպական ԿԲ պաշտոնական կայք էջում՝ Single Euro Payments Area (SEPA)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Moneytun համակարգով փոխանցումներն իրականացվում են ֆիզիկական անձ հաճախորդների միջև:
2. Արագ դրամական փոխանցում նախաձեռնողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալներ՝
   - Անձը հաստատող փաստաթուղթ.
   - Երկրի, նահանգի և քաղաքի անվանումը, որտեղ պետք է փոխանցվեն դրամական միջոցները.
   - Գումարը և միջնորդավճարը.
   - Շահառուի անունը, ազգանունը, որոնք նշված են անձը հաստատող փաստաթղթում:

3. Արագ դրամական փոխանցում ստացողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալներ՝
   - Անձը հաստատող փաստաթուղթ.
   - Փոխանցման ունիկալ/հսկիչ կոդը (6-12 նիշ).
   - Փոխանցողի անուն, ազգանունը և/կամ փոխանցված գումարի չափը և արժույթը:

4. Դեպի ԱՄՆ, SEPA անդամ երկրներ, Չինաստան, Հնդկաստան բանկային/քարտային հաշիվներին և ՌԴ քարտերին դրամական փոխանցում նախաձեռնողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալներ՝
   - Անձը հաստատող փաստաթուղթ.
   - Երկրի և քաղաքի անվանումը, որտեղ պետք է փոխանցվեն դրամական միջոցները.
   - Գումարը և միջնորդավճարը.
   - Շահառուի անունը, ազգանունը, որոնք նշված են անձը հաստատող փաստաթղթում.
   - ԱՄՆ փոխանցումների դեպքում՝
     - Շահառուի ABA համարը (9 նիշ)
     - Շահառուի Բանկային հաշվեհամարը
     - Հեռախոսահամարը
   - SEPA երկրներ փոխանցումների դեպքում՝
     - Շահառուի IBAN հաշվեհամարը
     - SWIFT կոդը
   - Չինաստան փոխանցումների դեպքում՝
     - Շահառուի Union Pay քարտային հաշվեհամարը
     - SWIFT կոդը
   - Հնդկաստան փոխանցումների դեպքում՝
     - Շահառուի Բանկային հաշվեհամարը
     - Շահառուի IFS կոդը (11 նիշ)
   - ՌԴ փոխանցումների դեպքում՝
     - Շահառուի քարտի համարը (16 նիշ)

5. Տարբեր արժույթային զույգով փոխանցման դեպքում փոխարկման փոխարժեքը սահմանվում է MoneyTun համակարգի կողմից:
6. Յուրաքանչյուր փոխանցման համար Բանկը պարտավոր է հաճախորդին տրամադրել փոխանցման կատարումը հաստատող անդորրագիր: Չտրամադրված արագ դրամական փոխանցումների վաղեմության ժամկետը կազմում է 90 օր:
7. Արագ դրամական միջոցների ուղարկման/ստացման և դեպի ՌԴ քարտերին փոխանցումների ուղարկման կատարման առավելագույն ժամկետը մինչև 10 րոպե է, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կամ Moneytun համակարգի կողմից

իրականացվում է լրացուցիչ ստուգում:

8. Դեպի ԱՄՆ, SEPA անդամ երկրներ և Հնդկաստան բանկային հաշիվների փոխանցումների ուղարկման կատարման ժամկետը կազմում է 1-2 աշխատանքային օր: Դեպի Չինաստան Union Pay քարտային հաշիվներին փոխանցումները հաշվեգրվում են 2-3 ժամերի ընթացքում, փոխանցումները իրականացվում են ՉԺՀ արտարժույթի պետական վարչություն (SAFE) աշխատանքային ժամերին, այն է երկուշաբթիից ուրբաթ Երևանի ժամանակով 4:00 – 13:00:
9. Moneytun համակարգով դրամական փոխանցումներն իրականացվում են Բանկի բոլոր մասնաճյուղերում 24/7 ռեժիմով՝ առանց հանգստյան և տոն օրերի (բացառությամբ «Հին Նորք», «Մովսես Խորենացի» և «Գորիս» մասնաճյուղերի):
10. Արագ դրամական փոխանցման վավերապայմանների փոփոխությունը Բանկի կողմից կատարվում է վավերապայմանների փոփոխման դիմումի փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա՝ առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման: Վավերապայմանների փոփոխությունը կատարվում է միայն ստացող կողմի անձնական տվյալներում՝ այն է անուն, ազգանուն, առկայության դեպքում հայրանուն:
11. Արագ դրամական փոխանցման չեղյալացումը կատարվում է չեղյալացման դիմումի և փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման, փոխանցման իրականացման նույն բանկային օրվա ընթացքում, փոխանցված գումարի և միջնորդավճարի վերադարձմամբ:
12. Փոխանցումների հետվերադարձ կատարվում է հետվերադարձի դիմումի և փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման:
13. Վավերապայմանների փոփոխությունը, չեղյալացումը, հետվերադարձը կատարվում են Moneytun համակարգի կողմից սահմանված կարգով:
14. Վավերապայմանների փոփոխությունը, չեղյալացումը, հետվերադարձը ենթակա է կատարման միայն չվճարված փոխանցումների դեպքում:
15. Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար: Փոխանցված միջոցները շահառուի կողմից չստանալու դեպքում փոխանցված միջոցների հետ վերադարձման համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
16. Բանկն իրավունք ունի փոխանցման կատարումը մերժել, եթե վերջինս չի համապատասխանում իր կամ համագործակցող կազմակերպության ներքին իրավական ակտերին կամ միջազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև պատասխանատվություն չի կրում համագործակցող կազմակերպության կողմից գործարքը մերժելու, կասեցնելու կամ սառեցնելու, գումարի հետվերադարձի, սանկցիաների կիրառման պատճառով գումարը շահառուին տրամադրելու կամ տրամադրման ժամկետների համար:
17. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրված սխալ տվյալներով փոխանցման վնասների համար:
18. Փոխանցումների իրականացման համար, ինչպես նաև հետո Ֆասթ Բանկի և/կամ համագործակցող կազմակերպության կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր, գումարի ծագման կամ փոխանցման հիմնավորման վերաբերյալ:
19. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ:
20. Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք այցելել https://moneytun.com/: Բանկը պատասխանատվություն չի կրում հղված կայքի բովանդակության ստույգության, արժանահավատության, դրանում տեղադրված գովազդների, տեղեկատվության օգտագործման հնարավոր հետևանքների համար:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.fastbank.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն՝ (+37410) 510000 հեռախոսահամարով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ